

## Առաջարկություններ

«Հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշիչի դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգի» նախագծի վերաբերյալ

1. Քանի որ դասագրքերը ստեղծվում են ոչ թե բնագավառների, այլ այդ բնագավառներում ընդգրկված առարկաների համար, ուստի առաջարկում ենք.
  - 2-րդ բաժնի 3-րդ կետի ենթաբաժիններում «Բնագավառների համար» կամ «Բնագավառի համար» բառերը փոխարինել «Բնագավառների առարկաների համար» կամ «Բնագավառի առարկաների համար» բառերով:
2. Քանի որ անհրաժեշտ է՝ դասագրքաստեղծ հեղինակը ունենա հնարավորություն իր ստեղծած դասագրքում, օգտագործման ընթացքում, կատարել նոր իրողություններից բխող լրացումներ և փոփոխություններ, և հաշվի առնելով, որ ըստ նախագծի հիբրիդ դասագիրքը դա թղթային դասագիրքն է՝ էլեկտրոնային հղման հնարավորություններով, ապա նպատակահարմար է, որ էլեկտրոնային հղման հնարավորություն ունենա յուրաքանչյուր թղթային դասագիրք, այլ ոչ թե դա լինի դասագրքի առանձին տեսակ: Ուստի առաջարկում ենք.
  - 2-րդ բաժնի 4-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Դասագիրքը կարող է լինել թղթային կամ էլեկտրոնային: Թղթային դասագիրքը կարող է ունենալ էլեկտրոնային հղումների հնարավորություն»:
3. Թղթային դասագրքի թվայնացված տարբերակի արդյունավետ օգտագործման և սպասարկման համար անհրաժեշտ է դասագրքի ձեռքբերման ժամանակ ձեռք բերել նաև տվյալ թղթային դասագրքի թվայնացման և դրա օգտագործման իրավունքը: Ուստի առաջարկում ենք.
  - 2-րդ բաժնի 5-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Թղթային դասագրքի ձեռքբերման ժամանակ ձեռք է բերվում նաև դրա թվայնացման և օգտագործման իրավունքը»:
  - 2-րդ բաժնի 6-րդ կետը հանել:
4. Քանի որ տարբեր դասագրքերի շաբաթական օգտագործման ժամաքանակը տարբեր է՝ կապված ուսումնական պլանով սահմանվելիք ժամաքանակների հետ, ուստի առաջարկում ենք.
  - 2-րդ բաժնի 7-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Միջին և ավագ դասարաններում՝ 3-ից 7 տարի՝ կախված տվյալ առարկայի շաբաթական դասաժամերի քանակից»:
  - 2-րդ բաժնի 7-րդ կետի 3-րդ ենթակետը հանել:
5. Ուսուցչի աշխատանքին օժանդակելու և տարբեր կարողունակություններ, հետաքրքրություններ, հակումներ ունեցող սովորողների կրթական պահանջները բավարարելու ու դասագրքում առկա նյութն ըմբռնելի դարձնելուն նպաստելու նպատակով, և հաշվի առնելով, որ դասագրքի էջերի թվի համար նախատեսվում

է սահմանափակում, առաջարկում ենք 2-րդ բաժնում ավելացնել նոր կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

- «Դասագիրքն ունի օգտագործման մեթոդական ուղեցույց և բովանդակությունը լրացնող կամ հարստացնող այլ ուսումնական նյութեր, որոնք կարող են լինել էլեկտրոնային:
- Թղթային դասագրքի էլեկտրոնային հղումները, դասագրքի օգտագործման մեթոդական ուղեցույցը և այլ ուսումնական նյութերը կարող են պարբերաբար թարմացվել, եթե երաշխավորվել են սահմանված կարգով»:

6. Սովորողի ուսումնառության ընթացքն ավելի հարմարավետ դարձնելու և այլընտրանքային դասագրքերից օգտվելու լայն հնարավորություն ընձեռելու համար առաջարկում ենք.

- 2-րդ բաժնի 10-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Սովորողը, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) գրավոր համաձայնության դեպքում, կարող է օգտագործել թղթային դասագիրքը կամ դրա թվայնացված տարբերակը կամ երկուսն էլ միաժամանակ, կարող է հրաժարվել թղթային դասագրքից և օգտվել էլեկտրոնային դասագրքից»:

7. Որպեսզի հնարավորություն ընձեռվի նոր դասագրքեր ստեղծելուն և, մյուս կողմից, հաջողված դասագրքերը, պարբերաբար անցկացվող միջոյթների պատճառով, չզրկվեն օգտագործման հնարավորությունից, առաջարկում ենք՝

- 2-րդ բաժնում ավելացնել կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «Դասագրքի առաջին օգտագործման ժամկետի ավարտից հետո անցկացնել դասագրքի ստեղծման նոր մրցույթ, իսկ նախորդ մրցույթով անցած դասագրքերը, որոնք ընդգրկված են եղել երաշխավորված դասագրքերի ցանկում, շարունակեն մնալ այդ ցանկում, եթե առարկայական չափորոշչում բովանդակային փոփոխություն չի կատարվել»:

8. «Գնումների մասին» ՀՀ օրենքում սահմանվում է, թե ով իրավունք չունի մասնակցելու մրցույթին, դրա համար Համապատասխանության փուլում, բացի գիտական համապատասխանությունից, գնահատվում է նաև օրենքով սահմանված պահանջը: Բացի այն, որ գիտական համապատասխանության մասին հավակնորդ դասագրքի հետ ներկայացվում է մասնագիտական եզրակացություն, կարող է առաջանալ անհրաժեշտություն՝ լրացուցիչ եզրակացություն ստանալու համար, ուստի առաջարկում ենք.

- 3-րդ բաժնի 17-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «**Համապատասխանության փուլ:** Այս փուլում գնահատվում է նաև ներկայացված հավակնորդ դասագրքում նյութի գիտական համապատասխանությունը: Գիտական համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը ներկայացվում է հավակնորդ դասագիրքը ստեղծողի կողմից և իրենից ներկայացնում է առնվազն երկու համապատասխան մասնագիտական կառույցների եզրակացություն՝ հավակնորդ դասագիրքի գիտական համապատասխանության վերաբերյալ: Հանձնաժողովը, գիտական

համապատասխանության վերաբերյալ ևս մեկ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով հավակնորդ դասագիրքը ուղարկում է մասնագիտական փորձաքննության: Գիտական համապատասխանության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն տված կառույցների և եզրակացության վրա աշխատած մասնագետների տվյալները ներառվում են դասագրքում: Այս փուլում դասագիրքը գնահատվում է «Այո՛, համապատասխանում է» և «Ո՛չ, չի համապատասխանում» գնահատականներով: Հաջորդ փուլ անցնում է «Այո՛, համապատասխանում է» գնահատական ստացած դասագիրքը:

9. Քանի որ բովանդակային գնահատումն իրականացվում է մասնագիտական հանձնաժողովի կողմից, և բովանդակային շեմը սահմանվում է հավակնորդ դասագրքերի հանրակրթությունում օգտագործման նպատակահարմարության որոշման համար, ուստի առաջարկում ենք.

- 3-րդ բաժնի 17-րդ կետի 2-րդ ենթակետի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Բովանդակային շեմն անցած հավակնորդ դասագրքերը կարող են օգտագործվել հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ որպես ուսումնաօժանդակ նյութ, իսկ երաշխավորված դասագրքերի ցանկում ընդգրկվելու համար պետք է անցնեն հաջորդ՝ փորձաքննության փուլ»:

10. Քանի որ վարկանիշային գնահատման փուլ կարող են անցնել նույն առարկայի մի քանի դասագիրք, և դրանց վարկանիշային գնահատման համար անհրաժեշտ է նախատեսել ողջամիտ ժամկետ, ուստի առաջարկում ենք.

- 3-րդ բաժնի 17-րդ կետի 3-րդ ենթակետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Նույն առարկայի յուրաքանչյուր դասագրքի վարկանիշային գնահատման համար տրվում է 15 աշխատանքային օր՝ հաշված հրապարակման օրվանից»:

11. Քանի որ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի համաձայն ԴՏՀՏՀ գնումներն իրականացվում են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կարգի համաձայն, ուստի առաջարկում ենք.

- 3-րդ բաժնի 22-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Կրթության կառավարման պետական լիազոր մարմինը դասագրքերի հրատարակման մրցույթն իրականացնում է Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքին համապատասխան»:

12. Որպեսզի դասագրքի միավոր գինից կախված դասագրքի բովանդակությունը չտուժի և տպաքանակի պատճառով մրցութում ներկայացված միավոր գինը արհեստականորեն չբարձրանա, առաջարկում ենք.

- 3-րդ բաժնում ավելացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ. «Հավակնորդ դասագրքի գինը ներկայացվում է հետևյալ խմբաքանակների համար՝ 100-5000, 5001-10000 և այդպես շարունակ՝ մինչև 50001-55000»:

13. Քանի որ 3-րդ բաժնի 23-րդ և 12-րդ կետերի դրույթներում կան անհամապատասխանություններ, ուստի առաջարկում ենք

- 23-րդ կետը հանել:

14. Քանի որ Հանձնաժողովը դասագրքերի բովանդակային գնահատումն իրականացնում է նախապես սահմանված բովանդակային չափանիշներին, դրանց համապատասխան բնութագրիչներին, մշակված գնահատման սանդղակին համապատասխան, ուստի անհրաժեշտ է հանձնաժողովների անդամների համար նախապես անցկացնել վերապատրաստումներ (ԴՏՀՏՀՀ-ն պատրաստ է այդ նպատակի համար հատկացնել միջոցներ): Առաջարկում ենք.
- 4-րդ բաժնի 31-րդ կետի վերջին նախադասության «յուրաքանչյուր առարկայի համար» բառերից հետո ավելացնել «որոնք անցել են գնահատման իրականացման համար անհրաժեշտ վերապատրաստում»:

ԴՏՀՏՀՀ-ի հոգաբարձուների խորհուրդ